

Ի՛ այլ ի քեզէ ոչ բաժանի: Քո անառակ որդիս անբան: Ի իւսմամբ միտք իմ ի քեզ Երգեմ ձայնիւս նուաղէ, պարէ,

Մոլորական իմ ի տանէ, Մոլորական եմ ի տանէ, Չաքարիայէ սա գրեալ է, Գրիգորիսէ սա գրեալ է, Ի թափառնիկոմն աղքատէ: Ի թափառնիկոմն աղքատէ:

Այս ամէն հետեւողութիւններով հանդերձ Չաքարիա ունի ինքնուրոյն ոճ մը, ոչինչ նուազ ողորկ եւ գրաւիչ քան ժամանակակիցները: Իր տաղերու մէջ եթէ թերութիւն մը չգալի է, այն կը կայանայ մասնաւորապէս մտաց բունազբօսիկ արտայայտութեանց մէջ. թերութիւն մը, որ հասարակ է ընդհանրապէս ամէն միջնադարեան բանաստեղծներու. որուն պատճառն պէտք է համարիլ տներու սկզբնատառերու եւ երբեմն վերջատառերու մէջ կապուելու մօլութիւնը: Չաքարիայի բոլոր տաղերն գրեթէ այսպէս արուեստակեալ են. առաջին, երկրորդ, չորրորդ եւ իններորդ տաղերու տնատառերու մէջ ջանացած է դասաւորել այբուբէնը: Երրորդի մէջ յօդել «Ի ՉԱՔԱՐԻԱՅԷ», տասներորդին մէջ «Ի ՂԱՐԻՊ ՉԱՔԱՐԷ», իսկ հինգերորդին սկզբնատառերն կը կապեն «ՉԱՔԱՐԻԱՅ ՆԸԻԱՍՏԷ», վարջատառերն «ՂԱՐԻԱՊԵՏԻՆ Է»:

Մենք ստորեւ հրատարակել փորձելով Միջնադարեան Հայ բանաստեղծիս մտաց արտադրութիւնքն առաջին անգամ, վստահ ենք թէ գրգիւ մ'ընծայած պիտի ըլլանք այլոց բանաստեղծիս այլ անծանօթներն ալ ի լոյս հանելու,